ՀՈԳԵԵՆՈՐՀ Տ. ԶԱՐԵՀ ԱԲԵՂԱ ԿԱԲԱՂՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

Քառասուն օր առաջ, ազգիս Վեհափառ Հայրապետի՝ Նորին Սուրբ Օծությունն Տ. Տ. Գարեգին Ա Կաթողիկոսի օրհնությամբ և իմ հոգևոր ծնող գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի ձեռնադրությամբ ու օծումով, բախտավորություն ունեցա իմ հինգ օծակից եղբայրների հետ, Աստվածակառույց Սուրբ Էջմիածնի հարկի ներքո, Սրբալույս մյուռոնի օծումով, ստանալու կուսակրոնության առաջին՝ աբեղայական աստիճանը:

Այս առիթով նախ որդիական սիրով երախտիքի ու գնահատանքի իմ խոսքն եմ ուղղում Գարեգին Ա Վեհափառ Հայրապետին: Մենք երախտապարտ ենք նրան՝ մեր հանդեպ ունեցած հայրական հոգածության համար, աստվածպաշտության, եկեղեցասիրության, հայրենասիրության բազմաթիվ այն դասերի համար, որոնցով դաստիարակեց նա մեզ, այն ոգու համար, որ ինքը՝ Վեհափառ Հայրապետը փոխանցեց մեզ՝ նախանշելով մեր ուղին: Այդ ուղին Աստծուն, Հայ Առաքելական Եկեղեցուն, ազգին, ժողովրդին, հայրենիքին անմնացորդ նվիրաբերության ուղին է:

Ինձ համար շատ նշանավոր այս օրը երախտագիտության խոսքս եմ ուղղում նաև իմ հոգևոր ծնող գերաշնորհ Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանին, Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանին, ում համարում եմ իմ մյուս լավագույն ուսուցիչը, նաև Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանին: Չեմ կարող չնշել, որ Աստծուն և Եկեղեցուն նվիրվելու առաջին սերմերը իմ հոգում նրա՛նք սերմանեցին:

Մենք երախտապարտ ենք Հոգևոր Մեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին: Նրանց դերն անժխտելի է մեր հոգևոր և իմացական աշխարհի ձևավորման գործում:

Ես գիտեմ, որ դժվարին, սակայն նաև քաղցր, առինքնող ու պարտավորեցնող է այն կոչումը, որի կրողները քառասուն օր առաջ դարձանք նաև մենք:

Սիրելի՛ հավատացյալներ, ես և օծակից եղբայրներս այդ օրն ուխտեցինք ուրանալ մեր անձերը և նվիրել մեզ ազգին, մեր Եկեղեցուն: Այսօր մենք նաև ձեր աղոթքներն ենք հայցում և խնդրում ենք ձեզ, որ մեր Սրբազան Պատարագների ժամանակ աղոթեք առ Աստված՝ մեր հավատքի զորության, մեր մեղքերի թողության համար:

Հիսուս Քրիստոսի Այլակերպության այս պայծառափայլ օրը, կամոքն Աստծու, ես իմ առաջին քարոզն եմ խոսելու այս Սուրբ Խորանից:

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

«Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց, եւ
ետուր ուրախութիւն սրտից մերոց»:

(ՍԱՂՄՈՍ Դ 7)

«Քո երեսի լույսը ծագեց մեզ վրա և ուրախություն տվեց մեր սրտերին»:

Սաղմոսերգուի այս հոգեշունչ խոսքերն իմաստավորում են այսօրվա, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի պայծառակերպության տոնի ողջ խորհուրդը, որը ցնծությամբ է ոգեկոչում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Հիսուսի պայծառակերպության տոնը մեր Եկեղեցու որդեգրած Տերունի հինգ տաղավար տոներից մեկն է: Այս տոների տաղավար անունը մեզ է փոխանցվել Մովսես մարգարեի հիմնած, Հին Ուխտի ժողովրդի կողմից մեծահանդես Տաղավարահարաց կոչված տոնի անունից, որը Եգիպտոսից դուրս գալուց հետո, նրանք տոնում էին տաղավարների մեջ:

Մենք՝ քրիստոնյաներս, այս սուրբ տոնի խորհրդին հաղորդակից դառնալու համար Հիսուսի պայծառակերպությանը վերաբերող ավետարանական հատվածների լույսով ջերմացնենք մեր հոգիները:

Մի օր Հիսուս, Կեսարիայի Փիլիպե քաղաք կատարած ճամփորդությունից վերադառնալուց հետո, Հոր առջև Իր սիրտը բանալ՝ աղոթել ուզեց: Նա Իր հետ վերցրեց երեք աշակերտներին՝ Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին, ու բարձրացավ լեռը:

Ըստ ավանդության, դա Թաբոր լեռն էր, որը Նազարեթ քաղաքի մոտակայքում էր գտնվում: Բարձրանալով լեռը՝ աշակերտները, որ հոգնել էին երկար ճանապարհից, խորը քնեցին: Հիսուս առանձնացավ նրանցից և սկսեց աղոթել: Հանկարծ Նրա դեմքն ու զգեստները սկսեցին պայծառանալ, փայլել: Ինչպես Ավետարանն է ասում, «**Նրա դեմքը փայլեց՝ ինչպես արեգակը, նրա զգեստները դարձան սպիտակ՝ ինչպես լույսը**»: Աշակերտները հանկած արթնացան ու քնաթաթախ ակամատես եղան մի տեսարանի, որը երբեք չէին տեսել: Նրանք նայում էին իրենց Տիրոջը և տեսնում, թե ինչպես էին արևի լույսից առավել պայծառությամբ փայլում Նրա դեմքն ու զգեստները: Հիսուսի կողքին կանգնած էին Հին Ուխտի սրբազնագույն անձերը՝ Մովսես և Եղիա մարգարեները, ովքեր Հիսուսի հետ զրուցում էին երկրային վերջին օրերի մասին: Պետրոս առաքյալը, շփոթված այս հրաշափառ տեսարանից, հանդգնեց միջամտել նրանց խոսակցությանը և ասաց. «**Տեր, լավ է, որ մենք այստեղ ենք: Եթե կամենաս, երեք տաղավարներ կշինենք՝ մեկը քեզ, մեկը Մովսեսի, մյուսն էլ Եղիայի համար**»:

Այդ պահին լուսավոր մի ամպ երևաց, և Աստված Իր Որդու վկայության ձայնը հնչեցրեց. «**Դա է իմ սիրելի Որդին, ում հավանեցի, դրան լսեցեք**»:

Ողջ մարդկության պատմության մեջ կարևորագույն իրադարձություն է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի պայծառակերպությունը, Նրա Աստվածային լուսեղեն հոգու հայտնությունն Իր աշակերտներին: Հիսուս մեր հոգիները լուսավորող լույսն է, ինչպես Ինքն է վկայում Հովհաննեսի Ավետարանում. «**Ես եմ աշխարհի լույսը**»:

Իսկ այդ լույսը աղբյուրն է կյանքի: Հիսուս պայծառակերպությամբ իբրև լույս երևաց աշակերտներին: Միշտ է, Տիրոջ աշակերտները միշտ Նրա հետ էին և հավատում էին, որ Հիսուս Աստծու ճշմարիտ Որդին է, սակայն իրենց մարդկային տկար զգայարաններով չէին կարողանում տեսնել այն Աստվածային լույսը, որ ներքուստ միշտ կար Նրա մեջ:

Հիսուս Իր պայծառակերպությամբ փաստեց նրանց, որ չնայած որպես մարդ է գործում երկրի վրա, սակայն Իր մեջ անժխտելիորեն ապրում է նաև Աստվածայինը, որը փայլեց իրրև լույս՝ ի տես աշակերտների, որպեսզի Տիրոջ հանդեպ ունեցած նրանց գերագույն հավատը, հույսը, սերը ավելի զորանա, ամրանա և փոխանցվի ողջ մարդկությանը: Ահա այս երկնահրաշ պայծառակերպության ժամանակ էր, որ Հայր Աստված, Հիսուսի մկրտությունից հետո, կրկին վկայակոչեց ու հավաստեց Իր ճշմարիտ Որդու հանդեպ ունեցած Իր հաճությունը:

Աշակերտները Սուրբ Լեռան վրա իրենց տեսածը և լսածը, իրենց ունեցած մեծ հավատի լույսը փոխանցեցին մարդկությանը, ինչը մեր՝ քրիստոնյաներիս հոգում Աստվածտեսության հույսն արթնացրեց և մեր սրտերը ուրախությամբ լցրեց: Ինչպես ասում է Դավիթ մարգարեն, «Քո երեսի լույսը ծագեց մեզ վրա և ուրախություն տվեց մեր սրտերին»:

Հիսուսի երկնատեսիլ կերպարանափոխությունը մեծ ուրախություն, ցնծություն պատճառեց նաև այն մարդկանց, ովքեր փրկություն որոնելու ճանապարհին գտան, տեսան, հավատացին իրենց ճշմարիտ Փրկչին: Նա իջավ երկնքից, մարդկային մարմին առավ, դարձավ Աստվածամարդ: Աստված միացավ մարդուն, վերցրեց նրա սխալները և, հաղթելով դրանք, մարդու մեջ վերականգնեց Աստվածային պատկերը, որով Աստված ստեղծել էր նրան: Այլ կերպ ասած՝ Հիսուս վերականգնեց Ադամին, դրա համար էլ Հիսուսին անվանում են երկրորդ Ադամ: Այս միտքը մեր շարականագիրն արտահայտում է հիասքանչ բառերով. «Որ գերագոյն փառաք պայծառացոյց զԱդամն առաջին, որ ճաշակմամբ պտղոյն մերկացաւ զփառս անպատումս, այսօր վերստին փառաք զարդարեաց»:

«Որ գերագույն փառքով պայծառացրեց առաջին Ադամին, ով (Ադամը) պտուղը ճաշակելով, անպատմելի փառքից մերկացավ, այսօր վերստին փառքով զարդարվեց»:

Հիսուսից ճառագած լույսը ողջ մարդկության փրկության լույսն էր: Այդ լույսով Հիսուս մի օր իջավ Հայաստան աշխարհ. «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա»:

Նա իջավ հնամենի Վաղարշապատ և այնտեղ ոսկե մուրճով հաստատեց իր աղոթքի տան՝ Սուրբ Տաճարի կառուցման վայրը: Երկնքից ճառագող լույսը տեսավ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և ավետեց Աստծո հաճությունը մեր ազգի հանդեպ: Նա էր, որ լույսի խորհրդով հնագույն հեթանոսական շատ տոներ վերափոխեց քրիստոնեական տոների: Նա ճիշտ այդպես էլ հեթանոսական Վարդավառ տոնը փոխարինեց Հիսուսի պայծառակերպության փառապանծ տոնով:

Իսկ մինչ այդ, այս օրը, մեր հեթանոս նախնիները հավաքվում էին ու տոնախմբում Վարդավառը, որ խորհրդանշում էր Նոր Տարին՝ Նավասարդի մեկը:

Սիրելի՛ հավատացյալներ, Պայծառակերպության տոնը մեր ժողովրդի համար նաև հույսի, միասնականության, վերածնության տոն է:

Մեր ժողովուրդը ինչպես բազմիցս իր պատմության քառուղիներում, այնպես էլ այսօր դժվարին ու ճակատագրական օրեր է ապրում: Անկախության անհարթ,

բայց հաստատուն ուղին կոչում է նրան ազգային իդեալների իրականացման սուրբ գործին: Այդ ուղին և՛ դժվարին է, և՛ արժանապատիվ: Բայց մենք չպիտի ընկճվենք առօրյա անցողիկ դժվարություններից, այլ բոլոր անլույս ու խավար օրերում մեր հոգու աչքերով պիտի տեսնենք Աստվածային լույսը, անհուսության պահերը պիտի վանենք մեզնից և ոգեկոչվենք Աստվածային սիրո և հույսի ներշնչումով:

Իսկ ինչպե՞ս պիտի տեսնենք Աստվածային լույսը, Աստծուն: Հիսուս այս հարցին այսպես է պատասխանում. «**Երանի նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք պիտի տեսնեն Աստծուն**»:

Այո, մեր ժողովուրդը Հիսուսի պայծառակերպության խորհրդին հաղորդակից կարող է դառնալ սրտի ու հոգու մաքրությամբ, միասնականությամբ, միաբանությամբ, միմյանց հանդեպ ունեցած եղբայրական սիրով, ճշմարիտ հավատով: Այսօր մենք պետք է վերագտնենք մեր հոգու երբեմնի կորցրած խաղաղությունը, մեր կամքն ու հույսը: Ինչպես Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն է ասում, «**Թող վերածնվի մեր մեջ հոգին խաղաղության, սիրտը եղբայրության, կամքը միության**»:

Արդ, եկեք մաքրենք մեր սրտերը չար մտքերից, միասնականորեն, ազգովի գանք մեր ազգի Թաբոր լեռը՝ Հայոց Եկեղեցի՝ աղոթելու, բացելու մեր հոգու ծալքերը մեր Աստծո առաջ, մաքրագործվելու: Մենք միայն այդպե՛ս կտեսնենք Աստծուն, կպայծառակերպվենք Նրա երեսի շողարձակած լույսով, կցնծացնենք մեր խռովահույզ սրտերը և Նրան կփառաբանենք՝ ասելով. «**Քո երեսի լույսը ծագեց մեզ վրա և ուրախություն տվեց մեր սրտերին**» և «**Քեզ վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս, ամեն**»: